ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

Դատական դեպարտամենտի կարիքների համար դյուրակիր համակարգիչների և բազմաֆունկցիոնալ լազերային սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/08» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

« 10 » ապրիլի 2024թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նիստը նախագահող՝

Խորեն Պետրոսյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Արթուր Թամրազյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Աիդա Հովհաննիսյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Նիստից բացակայում էր՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 1-ին ենթակետի՝ նիստը նախագահում է Խորեն Պետրոսյանը:

1. **Տեղեկություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/08» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին**

- հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 12-րդ օրվա (08.04.2024թ.)՝ ժամը 12:00-ն,
- հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,
- էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 09.04.2024թ.՝ ժամը 12:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքների գնման գների վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նիստը նախագահողը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գնման գները մեկ թվով արտահայտված.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման հայտով սահմանված՝ գնման գինը մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)
1	դյուրակիր համակարգիչներ	28599600
2	բազմաֆունկցիոնալ սարք՝ լազերային	41040000

3. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների վերաբերյալ

Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով, հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Մասնակցի անվանումը (անունը)	Մասնակցի գործունեության հասցեն
Սիրրա ՍՊԸ	-
Էյչ Գրուպ ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Բաշինջաղյան 1 փ, 13/30
Էլմարկետ ՍՊԸ	ք. Երևան, Աճառյան 33/4
«Ի Ջի Էլեկտրոնիքս» ՍՊԸ	ք. Երևան, Ֆրունզե 13
LA IMPORT LLC	ք. Երևան, Երկաթուղայիններ 4փ 2/4
ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան,0038, Աբելյան 6/1, B601 տարածք

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից, հիմնավորումներ ներկայացնելու մասին

Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Տեղեկատվություն «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/08» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքների մասին

«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/08» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքներն են.

Հ/Հ	Մասնակցի անվանումը (անունը)	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
			Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	Սիրրա ՍՊԸ	28599600	28000000	20 %	33600000	2100000	20 %	2520000	

1	Էյչ Գրուպ ՍՊԸ	28599600	24600000	20 %	29520000	21449200	20 %	25739040	
1	Էլմարկետ ՍՊԸ	28599600	23833000	20 %	28599600	21687570	20 %	26025084	
1	«Ի Ջի Էլեկտրոնիքս» ՍՊԸ	28599600	28000000	20 %	33600000	28000000	20 %	33600000	Մերժված
1	LA IMPORT LLC	28599600	2000000000	20 %	2400000000	2000000000	20 %	2400000000	Մերժված
2	Սիրրա ՍՊԸ	41040000	40000000	20 %	48000000	3000000	20 %	3600000	
2	Էլմարկետ ՍՊԸ	41040000	34200000	20 %	41040000	31700000	20 %	38040000	
2	ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ ՍՊԸ	41040000	37620000	20 %	45144000	32490000	20 %	38988000	
2	«Ի Ջի Էլեկտրոնիքս» ՍՊԸ	41040000	40000000	20 %	48000000	40000000	20 %	48000000	Մերժված
2	LA IMPORT LLC	41040000	2000000000	20 %	2400000000	2000000000	20 %	2400000000	Մերժված

Էլեկտրոնային հակադարձ աճուրդն ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 09.04.2024թ.՝ ժամը 12:30-ին և 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով Սիրրա ՍՊԸ-ն Համակարգի կողմից համարվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

7. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/08» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև Համակարգում առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի մուտքագրման (լրացման) մասին

Սիրրա ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում են (կցված չեն) հրավերով պահանջվող փաստաթղթերը, մասնավորապես՝ դիմում-հայտարարությունը (Հավելված N 1), իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևը (Հավելված N 1.3), հայտի ապահովումը՝ բանկային երաշխիքի (Հավելված 2) կամ կանխիկի փողի ձևով, ինչպես նաև և՛ 1-ին, և՛ 2-րդ չափաբաժինների մասով Համակարգում մուտքագրված (լրացված) չեն առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:

Սիրրա ՍՊԸ-ի հայտում առկա Դատական դեպարտամենտի կարիքների համար դյուրակիր համակարգիչների և բազմաֆունկցիոնալ լազերային սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/08» ծածկագրով գնման ընթացակարգի հայտարարությունը և հրավերը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

8. Տվյալներ՝ մերժված հայտերի ու ընթացակարգը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ

8.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը՝ հանձնաժողովը որոշեց 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով մերժել Սիրրա ՍՊԸ-ի հայտը:

8.2 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

- 1-ին չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ Էյչ Գրուպ ՍՊԸ-ի, Էլմարկետ ՍՊԸ-ի հայտերը մերժել,
- 2-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ Էլմարկետ ՍՊԸ-ի, ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ ՍՊԸ-ի հայտերը մերժել:

8.3 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով՝ «Ի Ջի Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի, LA IMPORT LLC-ի, աճուրդն ամփոփվելու պահին ներկայացրած գները գերազանցել են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք

ապրանքների համար գնման հայտով սահմանված գնման գները, ուստի նշված չափաբաժինների մասով ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են մերժված:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց.

- գնման ընթացակարգը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նիստը նախագահող՝ _____ Խորեն Պետրոսյան

Անդամներ՝

_____ Արթուր Թամրազյան

_____ Նորայր Աղամալյան

_____ Տիգրան Զեյնալյան

Քարտուղար՝

_____ Աիդա Հովհաննիսյան